

Ա. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Եւ ասէ ցնոսա հրեշտակն, Մի երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. Զի ծնաւ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի: Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս եւ եղեալ ի մտուր» -Ղկս. 2:10-13:

Սիրեցեալ ժողովուրդ Հայոց ի Հայաստան, յԱրցախ, ի Յորդանան եւ ի Պաղեստին, յԵրուսաղէմ եւ յԻսրայէլ եւ ի սփիւռս աշխարհի.

Կ'ողջունենք ձեզ այս գիշեր Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան Այրէն ուր համախմբուած ենք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տօնը յիշատակելու Երուսաղէմի Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն եւ Հայաստանէն, Թուրքիայէն, Բեթղեհէմէն, Երուսաղէմէն, Հայֆայէն, Նաֆայէն եւ շրջակայքէն ժամանած հաւատացեալ հայ ուխտաւորներու հետ միասին անգամ մը եւս լսելու համար հրեշտակին այս աւետիսը թէ «ծնաւ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի: Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս եւ եղեալ ի մտուր»: Հովիւներուն նման հրեշտակին կոչին անսպով եկած ենք ողջունելու այս մեծ եւ սքանչելի խորհուրդը աստուածային մանկան՝ Յիսուս քրիստոսի մարդեղութեան՝ որ ծնաւ Սուրբ Կոյս մարիամէն եւ մարդկային պատմութեան նոր ընթացք մը տուաւ: Մարդկութիւնը մօտեցուց Աստուծոյ եւ Անոր հետ հաշտեցուց: Աստուած մարդացաւ որպէսզի մարդը աստուածանայ:

Ահա այս մարդեղութեան խորհուրդը մեզ հետ տօնելու համար եւս մեզ հետ միացած են արտասահմանի թեմերու մէջ ծառայող Սրբոց Յակոբեանց միաբան մեր հոգեւոր եղբայրները, Գերաշնորհ Տ. Տաթև Արք. Ղարիպեանը, Պրագիլի Առաջնորդ, Տ. Խաժակ Արք. Պարսամեանը, Հիւս. Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ, Տ. Գիսակ Արք. Մուրատեանը, Արժանքինի Առաջնորդ, նաեւ Մայր Աթոռի միաբաններ՝ Գերշ. Տ. Նաւասարդ Արք. Կնոյեանը, Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ, եւ Բագրատ Եպիսկ. Գալստանեան, Գանատայի Առաջնորդ, ինչպէս նաեւ վարդապետներ Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերէն, Ֆրանսայէն եւ Աւստրալիայէն: Սրտանց կ'ողջունենք ասոնց բոլորին մասնակցութիւնը մեր այս Սուրբ Ծննդեան տօնակատարութեան:

Մենք նաեւ մեծապէս պատուրւած կը զգանք Պաղեստինի Վսեմաշուրք Նախագահ Տիար Մահմուտ Ապպասի եւ իրեն ընկերացող Պետական աւագանիին, ինչպէս նաեւ Բեթղեհէմի նորընտիր քաղաքապետուհի՝ Տիկին Վերա Պապունի: Այս առթիւ կը շնորհաւորենք Նախագահ Ապպասը իր քաջարի ու անշեղ յառաջ տարած քաղաքականութեամբ պաղեստինցի ժողովուրդը առաջնորդելու առանց զէմֆի եւ բռնութեան դիմելու՝ այլ խաղաղ

ճանապարհով եւ դիւանագիտական միջոցներով պաղեստինի ազատագրութեան նպատակին հասնելու իր ջանքերուն համար: Այսպիսով ան յաջողեցաւ անցեալ Նոյեմբերին Միացեալ ազգերու Ժողովին մէջ ընդունել տալու Պաղեստինը որպէս պետութիւն: Այժմ կը մաղթենք որ ան նոյն խաղաղ ֆաղափականութեամբ Իսրայէլի հետ բանակցութեանց ճամբով իրագործէ Պաղեստինի լիիրաւ անկախութիւնը եւ ապահովէ մշտական խաղաղութիւնը երկու երկիրներու ժողովուրդներուն, խաղաղութիւն՝ որ նաեւ հրեշտակներու օրհներգութեամբ լսուեցաւ Սուրբ ծննդեան գիշերը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Այս առթիւ մեր սրտագին բարեմաղթութիւնները կ'առաքենք Հայաստանեայց Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու գահակալներուն.

Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս, Նորին Ս. Օծութիւն Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետին՝ ի Սուրբ Էջմիածին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Նորին Սուրբ Օծութիւն Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ յԱնթիլիաս, Լիբանան:

Նաեւ Թուրքիոյ Հայոց Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ՝ Բարձրաշնորհ Տ. Արամ Արք. Աթէշեանին, ու կ'աղօթենք Ամենապատիւ պատրիարք՝ Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանի ապափնման համար:

Այս գիշեր մեր ամբողջ միտքն ու հոգին անգամ մը եւս կը կեդրոնանան մանկացեալ Փրկչին Յիսուս Գրիստոսի առաքելութեան նպատակին վրայ: Այդ նպատակն էր Աստուածն ու մարդը իրարու մօտեցնել իրարմէ բաժնող, իրարմէ հեռացնող, մեղքի վիհը անջրպետելով աստուածային անհուն սիրով եւ փրկարար շնորհով: Մարդը գիտակցելով Աստուծոյ դէմ իր գործած ահաւոր մեղքին՝ ապստամութեան՝ պէտք ունէր Փրկչի մը՝ իրեն ձեռք տալու՝ դուրս ֆաշելու այդ մեղքի ապականութեան տիղմէն՝ եւ վերադարձնելու զինք անմահական կեանքին որմէ զրկուելու դատապարտուած էր: Աստուած չէր լքած իր ստեղծագործութեան փառ ապսակը հանդիսացող իր արարածը՝ մարդը՝ զոր ստեղծած էր հողէն, սակայն իր շունչը՝ իր հոգին՝ տուած էր անոր, իր պատկերին համաձայն՝ «արասցուք մարդ ըստ պատկերի մերում» ըսելով: Ու այսպիսով ստեղծեց առ աջին Մարդը՝ Ադամը՝ եբրայէրէնով Ադամը, որ սակայն չար սատանայէն խաբուելով ինկաւ մեղքի մէջ եւ կորսնցուց իր անմահութեան շնորհը: Ահա Յիսուս քրիստոս Աստուծոյ միածին Որդին իր հրաշալի ծննդեամբ մարմին առաւ Սուրբ կոյսէն՝ դառնալով Երկրորդ Ադամ՝ մեղքէ գերծ մարդ՝ որպէսզի մնացեալ մարդկութիւնը իրեն հետեւելով փրկուի մեղքէ եւ ապաշխարութեամբ վերըստին արժանանայ աստուածային անմահութեան: Աստուած դարձաւ «Էմմանուէլ», այսինքն «Աստուած մեր հետ»: Արդարեւ աներեւակայելի հրաշք էր պատահածը: Աւետիս համայն մարդկութեան «որովհետեւ ծնաւ Փրկիչ մը Դաւթի Քաղաք Բեթղեհէմի մէջ»: Խաղաղութեան Իշխանը ծնաւ

համեստ մտորի մը մէջ կենդանիներէ շրջապատուած: Իր ծնունդով խաղաղութեան եւ սիրոյ պատգամը տրուեցաւ մարդկութեան որպէսզի մարդիկ գիրար սիրեն ու խաղաղութիւն տիրէ երկրի վրայ եւ անհետանան ատելութիւն ու պատերազմներ:

Դժբախտաբար այս պատգամը դեռ չէ տիրապետած ամենուրեք: Տեղ-տեղ ներկայիս պատերազմներ տեղի կ'ունենան որոնց հազարաւորներ զոհ կ'երթան առանց խտրութեան, մարդ, կին, երեխաներ: Սատանան կը շարունակէ գործել մարդու կերպարանք հագած: Մեր հարեւան երկիրը՝ Սուրիան՝ ահաւասիկ քաղաքացիական պատերազմի մէջ է երկու տարիներէ ի վեր եւ արդէն տասնեակ հազարներ զոհ գացած են եղբայրասպան բարբարոսութիւններու: Ցաւ ի սիրտ այդ պատերազմը չէ խնայած նոյնիսկ մեր հայ հայրենակիցներուն, հայկական եկեղեցիներուն ու հաստատութիւններուն: Քիչ չէ հայ զոհերու թիւը: Հայ եկեղեցիներ այրուած են: Հայկական թաղեր Հալէպի մէջ ակերածութեան ենթարկուած են: Վտանգուած է սուրիահայ խաղաղասէր համայնքը: 1915-ի Հայկական Ցեղասպանութենէն վերապրած ներկայ սերունդը անգամ մը եւս արհաւիրքի մէջ կ'ապրի: Հազարաւոր հայեր բռնած են արտագաղթի գամբան: Այս պահուն կոչ կ'ուղղենք մեր հայ հայրենակիցներուն իրենց մասնակցութիւնը բերելու սուրիահայութեան օժանդակութեան գործին թեթեւցնելու համար յիշեալ պատերազմի առթած աղիտալի հետեւանքները:

Իսկ այժմ աղօթեմք որ սիրոյ ու խաղաղութեան Իշխանը որ ծնաւ այս այրին մտորին մէջ՝ լսէ մեր աղաչանքները եւ օգնէ որ «լոնեսցին պատերազմունք, դադարեցնին յարձակումնք թշնամեաց, տնկեսցի սէր եւ արդարութիւն ի յերկրի»:

Աղօթեմք որ աշխարհի վրայ խաղաղութիւն, սէր եւ արդարութիւն ըլլայ եւ մեր հայրենիքն ու Արցախը շարունակեն վայելել խաղաղ եւ բարգաւառ կեանք: Մեր պատրիարքութիւնը իր Սրբոց Յակոբեանց անձնուէր միաբանութեամբ մնայ միասնական եւ հզօր իր քրիստոնէական եւ ազգային առաքելութեան մէջ իր սրբավայրերու եւ այլ ժառանգութեանց պահպանման մէջ ի փառս Աստուծոյ եւ յօգուտ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:

Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:

Արիս Արքեպ. Շիրվանեան

Պատրիարքական Տեղապահ Ս. Աթոռոյ

Բեթղեհէմ, 19 Յունուար 2013

